



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂԶՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(1969 թ. սեպտեմբերի 27)

«Զի՛ բարի, զի՛ վայելույ, զի բնական եղբարք ի միասին» (Սաղմ. ԾԼԲ):

Սաղմոսերգուի այս զգացումը առավելագույն չափով կապրինք Մենք այսօր, իբրև առաջին սպասավորը մեր եկեղեցիին, որ զձեզ բոլորդ իր շուրջ կտեսնեմ, որպես լծակից ու մարտակից եղբայրներ:

Այս ուրախությամբ է որ ջերմապես կողջունենք զձեզ, սիրեցյալ եղբայրներ Մեր, մաղթելով որ այս ժողովը իրավ ներշնչումներով համակված, մտածե ու գործե իբրև մեկ ու անբաժանելի հոգևոր մարմին: Այստեղ փորձենք բարձրանալ մեր «Ես»-ի սահմաններեն վեր, հասնելու համար «Մենք»-ի գիտակցության մակարդակին: Հիշենք թե սուրբ Հոգին իջավ առաքյալներու վրա, ոչ թե անոնց առանձնական աղոթքի մեկ պահու, այլ վերնատան մեջ, երբ բոլորը միատեղ էին, միատեղ կաղոթեին, միևնույն սպասումին մեջ: Այդպես սկիզբ առավ մեծ առաքելությունը Հիսուսի աշակերտներուն, և այդպես ալ շարունակվեցավ, վասնզի նաև հետագային, երբ բաժնվեցան իրարմե և ցրվեցան դեպի բոլոր կողմերը աշխարհի, անոնցմե ամեն մեկը գործեց հանուն բոլորին և բոլորը մնացին միշտ իբրև մեկ հավաքական մարմին: Հավաքական մարմնի իրողությունը հիմք կազմեց նաև եկեղեցվո կազմակերպության:

Արդ, Մենք այստեղ հավաքվածներս, կարո՞ղ ենք խորհիլ թե մեր այս ժողովը ևս պիտի հաջողի հասնիլ մեկ մարմին կազմող հավաքականության մը բարձունքին: Այն ատեն է միայն որ պիտի կարողանանք ոգեպես աճիլ ու ներշնչումի լիության հասնիլ: Այն ատեն է որ մեր ժողովը պիտի չըլլա լուկ թվաքական գումարը ժողովի անդամներուն, այլ բազմապատիկ ավելին, իբրև գումար և իբրև որակ, որովհետև ամեն մեկը պիտի ճոխանա բոլորով և բոլորը ամեն մեկով:

«Նախքան զամենայն, սէր սերտ ունել ընդ միմեանս. զի սէր ծածկէ բազմութիւն մեղաց», «Իւրաքանչիւր ոք որպէս և ընկալաւ շնորհս ինչ ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարութիւն հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ» (Ս. Պետրոս Դ 8—10):

Մենք, իբրև ընդհանրական Հայրապետ Հայաստանյայց առաքելական եկեղեցվո, հրավիրեցինք մեր միլիապետական Աթոռներու գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց պատրիարքը, Կ. Պոլսո հայոց պատրիարքը և մեր բոլոր եպիսկոպոսները անխտիր, առաջադրանքով՝ որպեսզի անոնք բոլորը ի մի ժողովյալ Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին շուրջ, միասնաբար ուսումնասիրեն օրակարգի հարցերը բազմակողմանի քննարկմամբ, եզրակացությանց հանգին և զանոնք ներկայացնեն Ամենայն Հայոց կաթողիկոսին, ի կանոնական տնօրինում:

Ամենայն Հայոց կաթողիկոսը գոհունակությամբ և գնահատանքով պիտի ընդունի եպիսկոպոսական ժողովի եզրակացություններն ու որոշումները, և եթե անոնք սպառնչ չափով լուսաբանված ու հիմնավորված և հստակ կերպով բանաձևված նկատվին եկեղեցական-կանոնական տեսակետե, պարտն ու պատշաճը պիտի տնօրինե իր հայրապետական իշխանությամբ, գործադրության վճիռ արձակելով կանոնական կոնդակով, ի հարկին զանոնք նախօրոք ազգային եկեղեցական ժողովի հավանության ենթարկելով մոտ ապագային, ինչ որ Մենք առավել հանձնարարելի կգտնենք, մանավանդ եկեղեցական և ազգային կարևոր հարցերու պարագային:

Մենք կխորհինք թե եպիսկոպոսական այս ժողովի աշխատանքներու ավարտին, երբ խմբագրված և բանաձևված պիտի ըլլան ժողովի եզրակացություններն ու որոշումները, ի վիճակի պիտի ըլլանք հաստատելու՝ եթե օրակարգի հարցերը սպառնչ կերպով քննարկված են և եզրակացությունները հստակ բանաձևված, այնպես որ Ամենայն Հայոց Հայրապետը բավարար հիմունքներ ունենա անոնց ընթացք տալու կանոնական տնօրինմամբ:

Ժողովի վերջավորության, Մեզի օգտակար պիտի ըլլա լսել ձեր տեսակետները այս մասին:

Ժողովի օրակարգի վրա դրված հարցերը բոլորն ալ այժմեական են և անհետաձգելի, և կպահանջեն մեզմե՝ իմաստուն վերաբերմունք, հեռատես գործելակերպ և խաղաղարար ոգի: Հարցերեն ոմանք բարդ են և կապված են տազնապալի կացությանց հետ, կացություններ որոնք տկարացուցած են մեր եկեղեցին և հաճախ տառապալից դարձուցած անոր կյանքը: Մեր հանգամանքի և պաշտոնի բերումով ավելի քան ալ մեկը, կտեսնենք, կապրինք մեր եկեղեցիին ներքին կազմակերպչական և բարոյական տկարությունները, մանավանդ կեդրոնախույս ձգտումները: Այս ժողովը կոչված է մասամբ զբաղիլ այդ կացություններով և իր խոսքը ըսել անոնց մասին: Անկախ թե ժողովը ինչ որոշումներ պիտի կրնա տալ և ինչ չափով պիտի հաջողի դարձանել մեր եկեղեցվո ներքին տկարությունները և վերացնել կամ մեղմել տազնապալի կացությունները, Մենք հեռու ենք և հեռու պիտի ըլլանք հոռետես ըլլալե մեր եկեղեցիի ապագայի նկատմամբ: Հոռետեսությունը, հուսահատությունը, ժխտական տրամադրությունները փաստորեն արտահայտություններ են ոգեկան ծուլության, որոնք մահացու մեղքեր են ճշմարիտ քրիստոնյայի համար: Մեր պարտքն է գործել լավատեսությամբ այն պայմաններուն մեջ որոնց մեջ կգտնվինք: Մարդկային կյանքի մեջ առհասարակ ոչ մեկ տեղ, ոչինչ կատարյալ է: Բայց նույնքան ճշմարիտ է թե ոչ մեկ իրավ աշխատանք, ու տքնություն, իզուր չեն անցնիր: Հավատքի մանանեխը պետք է ունենալ և ամուր պահպանել ու աճեցնել զայն մեր հոգիներուն մեջ:

Ակնարկեցինք մեր եկեղեցիին ներս, արտասահմանի մեջ դրսևորվող այլևայլ անկարգությանց և կեդրոնախույս զգտումներուն: Մենք մտադիր չենք այստեղ անդրադառնալ անոնց, սակայն կկամենայինք Մեր խոր համոզումը

բերել ձեզի թե բոլոր տեսակի նման անկարգ ու կեղոնախույս արտահայտություններ և կացություններ արմատ չեն բռնած բուն մեր ժողովուրդի հոգիին ու գիտակցության մեջ: Մեր հավատացյալ ժողովուրդի լայն զանգվածներու մեջ առողջ է հալու զգացումը, կրոնական և ազգային իմաստով, ինչպես Հայաստանի այնպես ալ արտասահմանի մեջ, բոլոր տեսակի բաժանումները և կեղոնախույս ձգտումները խորթ են մեր ժողովուրդին: Մենք անխորտակելի դաշինք պետք է կնքենք բուն մեր հավատացյալ ժողովուրդին հետ, ուղիղ ճամփու վրա բերելու համար բոլոր տեսակի ուղեկորույսները: Մենք երբեք չենք կրնար հաշտվիլ սփյուռքի մեջ մեր եկեղեցիի հերձուժով և անոր հոգիին բաժանումով՝ մեր հավատքի կեղոնն ու Էջմիածնեն և սուրբ գրական Հայաստան աշխարհեն: Հիրավի, ինչպես՝ս կրնանք հաշտվիլ նման կացություններով ալսօր, երբ ամբողջ հայ ժողովուրդը իր ազգային նոր զարթոնքը կապրի ամեն տեսակետե, մայր հողի վրա՝ քաղաքական վերածնունդով, տնտեսական ամբողջական վերաշինությամբ և մանավանդ ազգային մշակույթի փառավոր ծաղկումով: Այս իրողությունը խարխալ զգացում մը ստեղծած է մեր ազգի գիտակցության մեջ, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որ հիմնաքարն է համայն հայության կյանքին: Եվ որովհետև հայ ազգություն, հայոց պատմություն ու Հայաստանյայց եկեղեցի ի սկզբանե և դարեր շարունակ միշտ անբաժանելիորեն մեկ մարմին, մեկ կյանք ու ճակատագիր ունեցած են, կրնանք ըսել թե հայության այդ խարխալ զգացումը, հիմնաքարն է նաև մեր եկեղեցվո կյանքին ու գոյության իսկ:

Արտասահմանի հայ եկեղեցիներու, վարժարաններու, մշակութային ու հասարակական կազմակերպություններու և մամուլի գոյությունն ու գործունեությունը կիմաստավորվին միմիայն վերածնունդով հավիտենական Մայր Հայաստանին, որուն սրտին վրա կանգուն է, մեր օրերուն ալ շեն ու լուսաշող, նույնքան հավիտենական սուրբ Էջմիածինը:

Հայ եկեղեցվո և հայ հոգևորականության պատմական առաքելությունն է՝ պահել, պահպանել համայն հայոց ազգը իր քրիստոնեական հավատքին մեջ, ամբողջ ու անխառն:

Տխուր է ճակատագիրը այն հոգևորականին, որ պիտի փորձվի գործել մեր ժողովուրդի կրոնական և ազգային զգացումին դեմ, շեղեցնելով Հայաստանյայց եկեղեցին իր պատմության հունեն: Անցյալի մեջ ալ գտնված են ուղեկորույսներ, մղված անձնական փառասիրություններե կամ քինախնդրություններե և կամ պարզապես ծախված օտար շահերու, որոնք սակայն բարոյապես խորտակված են ու անեծքով հիշված հայոց պատմության գրքին մեջ:

Անտարակույս թե հայ եկեղեցին և ժողովուրդը պետք չէ կոզիացած մնան աշխարհի մեջ, և անհաղորդ՝ արդի կյանքի նոր ըմբռնումներուն, նոր ձգտումներուն և նոր սպասումներուն: Մենք բնավ կողմնակից չենք կրավորական կեցվածքի և մեկուսացումի: Այդ հակառակ պիտի ըլլար ոչ միայն մեր եկեղեցվո շահերուն, այլ նաև հայ մարդու հոգեբանության, մեր օրերուն, մարդկային աշխարհը խոր փոփոխության կենթարկվին սրընթաց արագությամբ: Հատկապես գիտության նորագույն նվաճումները նոր հորիզոններ կբանան: Կթվի թե լուսնի վրա առաջին մարդուն առաջին քայլը, մարդկության առաջին քայլը պիտի հանդիսանա դեպի նոր դարաշրջան մը, որուն հեռուները տեսնելու անկարող ենք տակավին: Գուցե այսպիսով պիտի փակվի ցարդ գրված արյունալի պատմության գիրքը, և պիտի բացվի նոր գիրքը աշխարհի պատմության: Երանի թե մարդկության ապագա կյանքը գերծ ըլլար

մեր ետև թողած քանի մը հազարամյակներու նախապաշարումներեն, շահագործումներեն, անարդարություններեն և պատերազմներեն, որոնք դարեր ու դարեր շարունակ ծով արյան մեջ խեղդված են անհամար բազմություններ, Լրբեմն ազգություններ ամբողջ, աշխարհը հաճախ սպանդանոցի վերածելով: Արդյոք պիտի կրնա՞նք հուսալ թե Գազարինով և Արմատրոնգով սկիզբ պիտի առնեն մարդկության՝ առանց արյան պատմությունը: Հարկ է լավատես ըլլալ և փառաբանել ներկա գիտության հոյակապ նվաճումները, առանց տնտեսելու սակայն թե՛ այդ նույն նվաճումները կրնան և սկիզբը հանդիսանալ անեղագույն չափերով արշունալի նոր դարաշրջանի մը:

Գիտության նվաճումներու ընթացքը կարելի չէ կասեցնել: Մարդկային իմացական հանճարը օրինաչափ կերպով դեպի հառաջ պիտի ընթանա, գիտության բացած նոր ճանապարհներով: Կմնա որ մարդիկ և ժողովուրդներ, իրենց բարոյական հանճարով ետ չմնան գիտության հառաջընթացքեն, չդառնան գերիները մեքենային և նյութի սանձազերծված ուժերուն: Արմատրոնգի քայլը պետք է կատարվի նաև մարդկային հոգե-բարոյական տիեզերքին մեջ:

Մարդը ի վիճակի դարձավ փշրելու նյութական աշխարհի հիմքը կազմող հյուլեն և սանձազերծել ցարդ անծանոթ, ամենակարող ուժերը նյութին: Նույն մարդը պիտի չկարողանա՞ արդյոք փշրել նաև կորիզ-հյուլեն մարդկային եսակեղրոն զգացումներուն, սանձազերծելու համար հոգիի նոր ուժեր, որոնք տակավ ստեղծեին մարդու նոր տիպար մը, հոգեփոխված, պայծառակերպված հոգեկան աշխարհով, ուր բարոյական ուղղություն և ձգտում ստանալին՝ անհատական սեփականության, տիրակալության, փառասիրության, նախանձի և այլ նման եսակեղրոն զգացումներ: Գուցե և աստվածային տնտեսության մեջ նախատեսնված էր մարդու Լուսին բարձրանալը, Որդվո Մարդո մեկ նոր հրաշագործությամբը վերստին հռչակելու համար՝ թե երկրային մարդիկ բոլորը անխտիր զավակներն են միևնույն Արարչին և հետևաբար եղբայրներ միևնույն ընտանիքի մեջ, միևնույն հարկին տակ: Արդարև ակընկալելի է որ աշխարհաստան նոր գյուտերը և նվաճումները ցնցեն ու սկսին կերպարանափոխել ու պայծառակերպել մարդու հոգին, գիտակցությունը, ստեղծել նոր մարդը, որուն տեսիլքը ունեցան երկու հազարամյակներ առաջ Ինքը Փրկիչը մեր Քրիստոս և Իր մեծ առաքյալը՝ ս. Պողոս: Այդ նույն տեսիլքի, այսինքն մարդու հոգեկան հեղաշրջումի և պայծառակերպումի քրիստոնեական ըմբռնումի հարազատ արտահայտիչը կհանդիսանա մեր սուրբ Ներսես Շնորհալիին, երբ իր աղերսը ուղղելով մեր Տիրոջ Հիսուսին կըսէ՝ «Միրտ իմ քարեղէն, սիրով քո ճմլեա»: Սխալած չենք ըլլար եթե խորհինք թե Շնորհալիին «քարեղէն սիրտ» պատկերը կվերաբերի մարդկային եսակեղրոն զգացումներու բարդույթին: Անտարակույս գալիք ժամանակներու ընթացքին՝ մտածումի, զգացումի ու գործելակերպի շատ ու շատ հին կադապարներ պիտի ձևափոխվին հետզհետե: Պիտի փոխվին նաև մարդոց կրոնական պատկերացումներն ու աստվածաբանական դրույթները: Հիսուսի Ավետարանը վերստին պիտի ավետվի մարդոց նոր ճառագայթումով, և ան պիտի դառնա ճշմարիտ Նոր Ուխտը երկրի մարդկային ամբողջ ցեղին: Երանի, նոր մարդու հոգին, իրապես պարարտ հող դառնար, զայն ընդունելու և կենսագործելու, որ այնպես ինչպես մինչև մեր օրերուն, երբ քրիստոնեյա մարդիկ և ժողովուրդներ հեռու եղած են, և հեռու են, իրավ քրիստոնեյա ըլլալէ:

Մենք կհավատանք թե Քրիստոսի Ավետարանը երբեք պիտի չհիմնա, երբեք պիտի չմոռցվի: Մարդը անոր պիտի դիմե մանավանդ վաղը, գտնելու և բյուրեղացնելու համար իր բարոյական հանճարը, որով և պիտի կարողա-

նա փրկվիլ, ոչ թե նվաճվելով այլ նվաճելով նյութին և տիեզերքին ուժերը: Առանց ավետարանական անսահման և անպայմանավոր սիրո և գութի պատվիրաններում, առանց խաղաղության և բոլոր ազգերու եղբայրական միասնության բարոյական հրամայականներում, մարդկային ընկերությունը օր մը ինքզինքը կրնա կործանել, իր իսկ ստեղծած մեքենաներով:

Արդարև նոր հորիզոնները կբացվին կրոնական աշխարհայացքի և կրոնական գործիչներու առջև: Մենք կհրավիրենք հայ եկեղեցվո սպասավորները որ իրենց ուշադրությունը կեդրոնացնեն այս հարցերու վրա, մտածումներու, խոհերու այս մակարդակեն տեսնելու իրենց բուն գործը և ճշտորոշելու իրենց բաժին ընկած աշխատանքը, որպեսզի Հայաստանյայց մեր հիմնավորց եկեղեցին, արդի աշխարհի մեջ իր գոյության իրավունքը և կենդանությունը պահպանե, գործոն կերպով իր առաքելությունը շարունակելով նախ իրեն հանձնված ժողովուրդի ծոցին մեջ, ապա նաև քույր եկեղեցիներու համաշխարհային շարժումի մեջ: Այս ոգիով և այս հեռանկարներով մոտենանք նաև շարք մը բարեկարգման այն հարցերուն որոնք մեր առջև կդրվին այս ժողովին մեջ:

Քիչ վերև կխոսեինք անհրաժեշտության մասին Արմատրոնգի քայլը կատարելու մարդու հոգեկան աշխարհին մեջ:

Տասնութերորդ դարու մեծ մտածող Էմանուել Կանտ կսիրեր ըսել՝ թե աշխարհի մեջ իրեն հիացում կպատճառեն երկու իրողություններ՝ աստղագարդ երկինքը անհուն և բարոյական օրենքի հրամայականը մարդկային գիտակցության մեջ: Այո, մարդը հասավ արդեն և լայն բացավ դռները աստղագարդ երկինքին: Այժմ սպասելի է որ բացվին նաև նոր դռներ մարդու հոգեկան աշխարհին և հասարակական կյանքին մեջ այնպես, որ բարոյականի հրամայականը չմնա կրոնական և փիլիսոփայական կոլ գաղափար այլ դառնա իրապես և ամբողջապես մարդկային հասարակական և միջազգային կյանքի անխորտակելի գերագույն օրենք:

Մեզի կրժի թե այս փրկարար քայլը, ժողովուրդները պիտի կարողանան միասնաբար կատարել, մեկնակետ ունենալով ամեն մեկի բազմադարյան կրոնական փորձառությունն ու ոգեկան-բարոյական ժառանգությանց նպաստը:

Առանց դարերուն կտակած ոգեկան ժառանգությանց, մարդկությունը, ոչ միայն ի վիճակի չի կրնար ըլլալ այդ բարձր բարոյականի մակարդակին հասնելու, այլ նույնիսկ կրնա զահավիժել դեպի նոր անդունդ մը, կույր բևազդներու, որ անխուսափելիորեն պիտի տաներ զայն դեպի նորանոր ողբերգություններ:

Մարդկության կրոնական ու ոգեկան ժառանգությանց մեծ զանձարանին մեջ, իր համեստ բայց բնորոշ նպաստը և բաժինը ունի նաև մեր ժողովուրդը, իր ոգեկան արժեքներով, որոնք բյուրեղացած են իր քրիստոնեական հավատքին և մտածողության, և իր հոգևոր-մշակութային ստեղծագործությանց մեջ: Հազար հինգ հարյուր տարի հետո, այսօր, կրնանք կրկնել Խորենացիի հաստատումը մեր ազգի հիշատակության արժանի կենսագործումներու մասին, առավել ստուգությամբ և ազգային առավել հպարտությամբ: Երբ կխոսինք արդի աշխարհի հետ քայլելու և արդի մարդկության հրամայականի հարցերով զբաղելու անհրաժեշտության մասին, երբ կխոսինք մեր հիմնավորց եկեղեցին իր առաքելության ճամփուն մեջ կենդանի ու կենսալի պահելու մասին, չմոռնանք ամեն բանն առաջ՝ մեր օրերու լուսին բերել մեր նախնյաց ժառանգության իրավ արժեքները, հայկական քրիստոնեության և ազգային ոգեկա-

նության զանձերը, զոր մենք կթերանանք ուղիղ գնահատել ու արժևորել. և երբեմն նույնիսկ ի վիճակի չենք ըլլար զանոնք հասկնալու:

Արդի աշխարհի հարցերով ապրելու և անոնց լուծում գտնելու ճանապարհի վրա ի խնդիր ոգեկան-բարոյական հրամայականներու կենսագործման, մեր եկեղեցին և մեր ժողովուրդն ալ պիտի կարողանան իրենց ուրույն մասնակցությունը և նպաստը բերել, իրենց բազմադարյան ոգեկան սեփական փորձառությունը և սեփական ժառանգությունը՝ պատվանդան ու մեկնակետ ունենալով:

Առանց մեր ազգային ոգեկան ժառանգության, մենք հայերս, իբրև եկեղեցի և ազգություն պիտի դառնայինք անարժեք մեկ բաղկացուցիչ մասը արդի մարդկության, ոչ արժանի հիշատակության:

Իբրև եկեղեցի և ազգություն, արդի և ապագա մարդկության առաջ մենք կրնանք ճանաչելի և գնահատելի դառնալ միմիայն մեր կրոնական-ազգային ոգևորության ինքնուրույն նկարագիրով և արժեքներով:

Մեր լուսաբնակ նախնիք, բազում դարերու հերոսական մաքառումներով և բազում սերունդներու ստեղծարար ճիգերով, մեզի թողուցին նվիրական ժառանգություն մը, գերագույն սրբություն մը, տասնևվեց դարեր շարունակ պաշտպանված ու պահպանված՝ ամբողջ, անբաժան ու անաղարտ: Այդ մեր սուրբ եկեղեցին է՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, հաստատված Միածնի Իջման տեղին վրա, սուրբ գրական Արարատի ստորոտին, որ եղավ ու մնաց, ս. Գրիգոր Լուսավորչի երանելի օրերեն մինչև այսօր՝ գերագույն կեդրոնը մեր եկեղեցվո, գերագույն կեդրոնը հայոց կրոնական և ազգային ոգեկանության, գերագույն երաշխիքը հայ քրիստոնեական հավատքի վավերականության, հայ եկեղեցվո միության և հայ հավատացյալ ժողովուրդի ազգային միասնության:

Արդ, մենք այսօրվաններս, պիտի չկարողանա՞նք զայն պաշտպանել ու պահպանել, այնպես, ինչպես մեր նախնիք զայն հանձնեցին մեզի:

Մենք կմնանք լավատես: Այո, կրնանք երբեմն տկարանալ, երբեմն տարակուսիլ, երբեմն շփոթվիլ, սակայն վստահ ենք թե մենք բոլորս, մեկ ոգեկան մարմին կազմած, իրավ հավատքով զորացած և ս. Էջմիածնի հազարամյա քարերու խորհուրդով ներշնչված, կարող պիտի ըլլանք խորհիլ, ծրագրել ու գործել ուղիղ ճանապարհով, պտղառատ արդյունքներով:

Հաջողության մաղթանք և օրհնություն՝ Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսական աջ ժողովին:

